Հրանտ Մաթևոսյան

Այսքան երկարատև լռություն

- Ձեր վերջին երկու գրքերը՝ «Խումհարը» և «Տերը» համարյա միաժամանակ լույս ընծայվեցին անցյալ տարի «Սավետսկիյ պիսատել» և «Խուդոժեստվեննայա լիտերատուրա» հրատարակչություն-ներում: Նոր դժվար է անվանել, որովհետև բացի «Մեծամորից», որ առաջին անգամ է ռուսերեն տպագրվում, մնացած գործերը հայտնի էին արդեն ռուս ընթերցողին (օրինակ՝ «Տերը» տպագրվել է 1987 թ. «Дружба народов» ամսագրում): Ակներևաբար այդ երկու ժողովա-ծուների բովանդակած նյութը պատահական չէ՝ արդյունք է Ձեր լռության, ոչ թե խմբագիրների չարակամության: Որքա՞ն տևեց այս անգամ Ձեր լռությունն ու ինչո՞վ էր լցված:
- Ահա արդեն երկար ժամանակ ոչինչ չեմ գրում՝ հուրախություն իմ ոչբարեկամների: Գրողի համար դա կյանք չէ: Հավանաբար, նույնիսկ սեփական մահը նկարագրելու համար մարդը պիտի իրեն առողջ զգա և գրի ստեղծագործելու համար տանելի պայման-ներում, այսինքն՝ ունենա նվազագույն հանգիստ, նվազագույն հարմարություններ, առանձնանալու հնարավորություն: Այո, այո, սեփական չարորակ ուռուցքը նկարագրելու համար անհրաժեշտ է նախ առողջ լինել:
- Ո՞ր առողջությունը նկատի ունեք:
- Բոլոր: Բայց այս պարագայում՝ ամբողջ հասարակության առողջությունն ու ամբողջ հասարակության հանգստությունը: Եթե հիմա ամբողջ երկրում խաղաղություն հաստատվեր, ես թեթևացած շունչ կքաշեի: Ավաղ, մենք առաջվա նման փնթփնթում ենք ու անհամբերություն ենք դրսևորում, պահանջում ենք վճռական միջոցներ ու վճռական փոփոխություններ, չենք հանդուրժում ու լսել չենք ուզում ուրիշի կարծիքը, և որ ամենաանհասկանալին է՝ տենչում ենք ոչ թե

բարին, այլ վրեժ ու արյուն: Դա պետք էր սպասել: Երբ առնչվում ես ուրիշ երկրների բարեկեցության հետ, ակնհայտ է դառնում, որ դա ձեռք է բերվել հաշտվողականության ու հանդուրժողականության քաղաքականության շնորհիվ: Եկեք իրերին իրենց անունները տանք՝ աղքատությունն իրեն բնորոշ բոլոր բարդույթներով այսօր մեր երկրում զորահանդեսի հրամանատարն է: Իսկ աղքատությունն անխուսափելիորեն իր հետ բերում է արյուն, արյուն ու արյուն:
- Ինչպե՞ս խուսափել արյունից:
- Հիվանդ մարդը ձգտում է թաքցնել իր խոցերն ու ցավերը, չշփվել ուրիշների հետ, որ հանկարծ չվարակի: Մենք դեռ չենք հասել այդ նրբանկատությանն ու խստապահանջությանը միմյանց հետ հարաբերություններում, ժողովուրդների հետ հարաբերություն-ներում: Մինչդեռ կարելի է ինչ-որ բան զսպել քո ներսում, վեհանձնություն դրսևորել, եթե պետք է, նույնիսկ հնազանդություն, ուրիշին ներել այն, ինչ քեզ չէիր ների: Մենք ոչ թե ներել, մերձավորին լսել իսկ չենք փորձում: Ապրում ենք միմյանց մասին ունեցած պատկերացումների վակուումում: Օրինակ՝ ինչ գիտի այսօր միջին խորհրդային քաղքենին այսորների կամ ադրբե-ջանական հրեաների, սև թաթարների կամ միջինասիական հանրապետությունների, Վրաստանի կամ Հայաստանի, կամ Մերձբալթիկայի մասին: Նա տարբերություն չի դնում լատիշի ու էստոնացու միջև, նրա համար բոլորն էլ մերձբալթիկացիներ են, որոնց նույն քաղքենին, թեպետ նախանձում է, վերաբերվում է զգուշությամբ, այնուամենայնիվ հարգում է, ինչ-որ դեպքերում նրա առաջ իր թուլությունն է զգում, կամ ինչ-որ նման բան: Իսկ անդրկովկասցիները նույն քաղքենու տեսակետով, մի բառով՝ չարչիներ են, նրանց հետ ինչ հարաբերություններ կարող են լինել: Լրագրողների անպատասխանատվության պատճառով օրեցօր ամրապնդվում է էքստրեմիստների ու սնշապիկավորների կերպարը, և երեկ նրանց, ում առանց ազգային պատկանելության տարբերակման, անվանում էին վրացի, այսօր իրենցից էլ աննկատ վերանվանեցին հայեր: Անտեղյակության այս մթնոլորտում իրենց կարող են դրսևորել միայն շատ խոշոր ազգային միավորները: Բնականաբար այս իրավիճակում ես միանգամայն կարեկցանքով եմ վերաբերվում մերձբալթյան յուրաքանչյուր հանրապետության կենտրոնախույս ձգտումներին, որ ի վիճակի չեն այս ամենից գլուխ հանել ու այդ պատճառով ձգտում են դեպի իրենց հյուսիսային հարևանները՝ ավելի հանգիստ ու արժանապատիվ կյանքի հույս ունենալով, քան այստեղ է: Հասկանալի է, որ եթե

ես մերձբալթիկացի լինեի և տեսնեի, որ ոչ մի կերպ չի հաջողվում հարթել հայ-ադրբեջանական հակամարտությունը, ոչ մի կերպ չի հաջողվում ճշմարտության ու արդարության, քաղաքակրթության ու մարդասիրության ճանապարհը հարթել, կջանայի ինձ պաշտպանել այդ գլխացավանքից: Յուրաքանչյուրը փնտրում է փրկության իր ճանապարհը:

- Մի անգամ՝ «Ինչո՞ւ բացախոսության ծաղկման պահին լռեցին շատ արձակագիրներ ու դրամատուրգներ» հարցին Վլադիմիր Արրոուն պատասխանեց՝ հավանաբար կատարվողն իմաստավորելու համար...

- Ես, անկեղծ ասած, այլ կերպ կպատասխանեի: Չգիտեմ, որքան եմ բանաստեղծականացնում ասվածը, բայց «Անդրեյ Ռուբլյովում»՝ իմ ամենասիրելի ֆիլմերից մեկում, կա մի այսպիսի նովել՝ ինչպես է Ռուբլյովը սկսում աշխատել «Ահեղ դատաստանի» վրա: Պատկերացրեք որմնանկարի համար նախապատրաստված պատը՝ կարելի է նկարազարդումը սկսել, բայց Ռուբլյովը պատին չի դիպչում: Ինձ թվում է՝ Տարկովսկին ուզում է ասել, որ Ռուբլյովը «Ահեղ դատաստանը» չի որմնանկարում, որ իրականություն չդառնա: Այսինքն՝ նա լռությամբ փորձում է կանխել այն, ինչ կարող է կատարվել: Սակայն չնայած նրա լռությանը, Ահեղ դատաստանը տեղի է ունենում: Կարծում եմ՝ ամբողջ սովետական գրակա-նությունը հիմա նման է համրացած Ռուբլյովին՝ խոսքում չմարմնավորելով այսօր կատարվողը, մենք վախենում ենք, որ խոսքի հետքով կարող է լույս աշխարհ ելնել արյունն ու չարի դիվական ուժը: Մենք վախենում ենք այդ Ահեղ դատաստանից մեր գրքերում, որովհետև իրոք մեծ մարդասիրություն կա լռության մեջ, լռության մատնելու, թաքցնելու մեջ: Եթե բացահայտես ճշմարտության բոլոր շերտերը, ստիպված ես ոչնչացնել ամբողջ կյանքը: Ես պահպանողական եմ: Գուցե սխալվում եմ, բայց ես պատկանում եմ մի ժողովրդի, որ չափազանց շատ արյուն է տեսել, զրկվել է ինքնուրույն պետություն ունենալու հնարավորությունից, դարերով, մինչ այսօր ենթարկվել է հալածանքների, հետա-պնդումների, կոտորածների, և այդ պատճառով ես իսկապես թանկ եմ գնահատում կյանքի ավանդական ընթացքը պահպանելու յուրաքանչյուր հնարավորություն, որպեսզի հնարավորինս քիչ լինեն ցնցումները: Իսկ դրա համար մենք պիտի հանդուրժող լինենք սեփական ու այլոց մեղքերի նկատմամբ, պիտի ջանանք հասկանալ ու ներել միմյանց: Ես վախենում եմ հեղափոխություններից, վախենում եմ մաքսիմալիստական կարգախոսներից: Ես կարծում եմ, որ ամենակործան հեղափոխության կոչ անող մարդը դուստր չունի,

որին փողոցում կարող են բռնաբարել մարտականորեն տրամադրված ջարդարարները, ընտանիք չունի, որին կարող են տանիքից գրկել, կամ ընտանիքն ինչ-որ տեղ Ամերիկայում է, իսկ նա այստեղ ճամարտակում է իր մտքի ինտելեկտուալ ճախրանքով:
Վերջերս ամերիկյան լսարաններից մեկում ես հանդիպեցի իմ հայրենակիցներին, որ ներկայացնում էին Դաշնակցություն կուսակցությունը: Սովետական մամուլում նրանց միշտ մեղադրում էին ահաբեկչության ու այլ մեղքերի մեջ ու ներկայացնում էին իբրև խրտվիլակ: Հանդիպման ընթացքում ես անսպասելիորեն հաս-կացա, որ այդ մարդիկ նույնպիսի պահպանողականներ են, ինչպես ես, որ նրանք նույնքան վախենում են անարխիստական տրամադրություններից Խորհրդային Միությունում, որքան ես: Ժամանակն է, որ մենք էլ վերջապես գիտակցենք, որ պետությանը պետք է ոչ թե հեղափոխություն, հեղաշրջում, այլ անշտապ, մանրակրկիտ, դժվարին վերափոխող աշխատանք:
- Համարյա ինչպես Մանդելշտամի մոտ՝ «Բայց զոհերը չեն ցանկանում կույր երկինք, // Աշխատանքն ու կայունությունը նախընտրելի են»:
- Քանի տարի ենք մենք անարժանորեն հաց կերել, հիմա պիտի արժանապատվորեն քաղցենք: Մենք արժանի ենք այս աղքա-տությանը և հիմա միայն մի ելք ունենք՝ վերադառնալ խաղաղ աշխատանքի, որ լցնենք այն դատարկությունը, որին ինքներս ենք նպաստել:
- Մենք հիմա զրուցում ենք, իսկ ներքին խմբագիրը՝ գրողի առաջին թշնամին, իմ մեջ զզվելիորեն ծանրութեթև է անում. «Սա կանցնի, իսկ սա հազիվ թե տպեն նույնիսկ մեր ժամանակներում»... Սովորույթ է: Դուք նկատե՞լ եք Ձեր մեջ սեփական խոսքը խեղդողին: Վերջին տասնամյակների հայ գրականության մեջ չափազանց քիչ չէ՞ անկեղծությունը, որովհետև ինքներս մեր թևերը կտրում էինք:
- Վերջիվերջո մեզ բարի կամեցողների ջանքերով ներքին գրաքննիչը հայտնվեց: Սկսում ես ինքդ քեզ հետ մուկն ու կատու խաղալ: Գրում ես կոնկրետ գործ, որտեղ որոշակի դրամատիզմ կա, կրքերի շիկացում, պայթյուն: Ասենք հերոսներից մեկը հայ է, մյուսը՝ թուրք, ամեն մեկն իր խնդիրներն ունի: Բայց ներքին գրաքննիչը պնդում է, որ դա թուրքի տեղը չէ, ոչ էլ հայն է այդ պահին իր խնդիրներով պետք: Եվ ահա պատմվածքը կործանման եզրին է, և այդ ժամանակ ակամա անցնում ես եզոպոսյան լեզվին: Արդյունքում դու ինչ-որ բան գրել ես, բայց կարծես թե չես գրել: Այնուհանդերձ. կարծում եմ, որ գեղարվեստական կատարե-լությունն այն գեղեցիկն է, որի առաջ նահանջում է

նույնիսկ ոչ բարեկամի ձեռքը: Եթե, այնուամենայնիվ, ինչ-որ մեկն ուզում է սրբագրումներ անել քո գրածի մեջ, թերևս ինքդ ես այդ հնարավորությունը տալիս քո խոսքի անկատարությամբ: Սակայն մենք գիտենք, որ նման անբնական իրավիճակներում գրվել ու ստեղծվել է իսկական, պինդ գրականություն: Ինչ վերաբերում է հայ գրողներին, կարծում եմ, որ մենք ենթագիտակցորեն երբեք մեզ չենք զգացել այս երկրի լիարժեք տերեր և այդ պատճառով գլոբալ հարցերում մեզնից ոչ մեկը չէր հակառակվում հետընթացին՝ այդ իրավունքը թողնելով ռուս մտավորականներին: Ասենք, մեզանում չէր կարող ծնվել Սոլժենիցին թեկուզ այն պատճառով, որ նրան երկրից չէին արտաքսի, այլ ուղղակի ֆիզիկապես կոչնչացնեին:
- Գրականության մեջ իրավիճակը կտրականապես փոխվել է: Մենք շատ նոր անուններ ենք իմացել: Բայց լռության գոտին հաղթահարել են գերազանցապես ռուս գրողները: Այն տպավորությունն է, որ հանրապետություններում ոչ ոք անտիպ գործեր չուներ:
- Դա բարդ հարց է: Գործնականում մեր բոլոր հանրա-պետությունները հայտնվել են մի վիճակում, երբ դեռ նոր պիտի ի հայտ գան սեփական Բերդյանները և Գումիլյովները: Իրենց գրականությունները վերադառնալուց և ինքնահաստատվելուց հետո միայն այդ գրողները կարող են վերադառնալ համամիու-թենական ընթերցողին: Բացի այդ՝ Սոլժենիցինից հետո հանկարծ արժեզրկվեցին ու իմաստը կորցրին մեծ թվով ստեղծագործու-թյուններ:
Ինչ վերաբերում է Հայաստանին, վերջին տարիների ողբերգու-թյունները մի քանի տասնամյակով մեզ ետ շպրտեցին: Մենք պիտի կորցրածը վերադարձնենք ոչ միայն տնտեսության, այլև մշակույթի մեջ: Ճիշտ է, հայ սփյուռքն արտասահմանում ստեղծել է բավականաչափ հետաքրքիր ու ինքնատիպ մշակութային շերտ պատմագրության, արվեստի մի քանի ոլորտներում, շատ գործեր միջազգային շրջանառության մեջ են մտել: Բայց մենք, նույնիսկ մեզ մոտ՝ հանրապետությունում, ամբողջ երկիրը դեռ մի կողմ, գործնականում զրկված ենք այդ հարստությանը հարաբերվելու հնարավորությունից: Մենք հայտնվել ենք առեղծվածային իրավիճակում, երբ Հայաստանի պատմությունը գոյություն ունի երկու հարթություններում՝ մեկը սովետական մեկնաբանությամբ, մյուսը՝ առանց աղավաղումների, հայտնի է ամբողջ աշխարհին: Մեզ այնքան է ճշմարտության սուռոգատ մատուցվել, որ մենք աղքատացել ենք ոչ միայն նյութապես, այլև հոգեպես:

- Ի՞նչ հարաբերություններ ունեիք խմբագիրների հետ:
- Մենք բոլորս Տոլստոյներ ենք և, համապատասխանաբար, ի դեմս խմբագիրների ցանկանում ենք ունենալ մեր Մակովեցկի-ներին: Մեզ մոտ խմբագիրը, իբրև օրենք, քո չարագույն թշնամին է, սկսած երեկվա աղջնակից, որ իրեն երևակայում է ոչ այն է գրաքննիչ, ոչ այն է խմբագիր, որ ինձ պաշտպանում է իմ սեփական տեքստից: Ես ոչ միայն հիասթափված եմ իմ խմբագիրներից, ես տհաճություն էի զգում նրանց մասին մտածելուց: Խմբագիրը կոչված է բացահայտել քո մեջ թաքնված Մոցարտին, այլ ոչ թե դահիճ լինել կիսագրագետ մերձգրական տիկնոջ տեսքով կամ այն օրիորդների, որ անթիվ բազմությամբ հայտնվել են հրատարակչու-թյուններում:
- Գրաքննության և խմբագրական կամայականության վերացումով սուտը չվերացավ: Եվ առայժմ մենք դրանից ոչ մի կերպ պաշտպանված չենք: Աքսյոնովի դիպուկ արտահայտությամբ՝ «խոսակցության ոլորտների ընդլայնումով ընդլայնվեց և ստի ոլորտը»: Գործնականում վիթխարի երկիրը զրկված է ամեն ինչի մասին լիակատար տեղեկատվությունից: Ինչպե՞ս ապրել այդ ստի մեջ: Ես հասկանում եմ, որ դա լավագույն թեման չէ գրականության մասին զրույցի համար, բայց վերադառնալով լռության թեմային, կարծում եմ, որ այս իրավիճակում լռությունը ավելի լավ է այն ոչ ճշմարտությունից, որ ներկայացվում էր իբրև ճշմարտություն:
- Այդ հերթական սուտը նորից կստեղծի կեղծ գրականություն, որն արդեն վաղը, ոչ՝ այսօր, ոչ մեկին պետք չի լինելու: Ոչ այնքան վաղ անցյալի գրականությունը, որ ոչ քիչ ջանքեր էր պահանջում, կոչված էր փոխարինելու իսկական մշակույթին: Ավաղ, մեր առաջ կուրացուցիչ դատարկություն է: Գրվել են վեպերի կույտեր, որ այսօր դարձել են մակուլատուրա: Ահա այսօր էլ ստեղծվում է կիսաճշմարտություն, կեղծիք: Ես նույնիսկ չգիտեմ ինչպես պայքարել նման կեղծարարության ու նմանակումների դեմ: Նոր այբուբե՞ն, ճշմարտություն որսող սա՞րք ստեղծենք: Մի՞թե մենք նույնիսկ ի զորու չենք ճշմարտությունը ստից տարբերել:
- Դե ոչ, մենք ամեն ինչ հիանալի գիտենք...
- Իսկ եթե չգիտե՞նք: Մի բան է իմանալ և լռել, մի բան է իմանալ և խոսել: Բառը մերկացնում է մեր գիտելիքների իսկական չափը: Իրո՞ք մենք ամեն ինչ գիտենք: Չեմ կարծում: Պարզապես ես հույս ունեմ, որ մենք՝ հայերս, ժողովուրդների շարքում ամենավերջինը չենք: Կարելի է շարունակել մեզ խոչընդոտել,

վախեցնել ու արգելել, բայց Հայաստանն ավելին է տեսել, և ինչպես գիտենք՝ վերապրել է ու ապրելու է: Եվ մեր կապերը արտաքին աշխարհի հետ ընդլայնվելու են, ինչքան էլ, կրկնեմ, դրան խանգարեն հնարավոր բարեկամ կամ չարակամ, որ քիչ չեն ամենատարբեր ատյաններում: Մեկն այդպես է վարվում առանց չարակամության, ինքնաբերաբար, հին-բարի ավանդույթով, որովհետև այլ կերպ չի կարող, մեկն էլ ունի բավականին հեռահար նպատակներ և թշնամանքն էլ համարյա չի թաքցնում: Դա կարող է լինել ինչ-որ սեփական չինովնիկ, հարազատ հոգի՝ փտած ապարատում, որ տեղավորվել է այնտեղ ինչպես ծույլ, փսլնքոտ կատուն տաք անկյունում, և ոչ մի գնով այդ անկյունից նրան չես քշի: Բայց ուր կկորչի նա, ինչի՞ է նա պետք, եթե իշխանությունը նրա համար միակ հնարավորությունն է իր պատառը պոկելու, և իր իշխանությունը նա ոչ մեկին ոչ մի դեպքում չի զիջի: Հաճախ բացահայտորեն զգում եմ մեկ այլ դիմադրություն ևս՝ կենտրոնական իշխանության, որի համար, ակնհայտորեն, դժվար է հասկանալ մեր խնդիրները, որի համար մենք փոքրիկ զինվորիկ ենք քաղաքական մեծ խաղում և այդ զինվորիկին կարելի է նաև զոհաբերել: Չէի ուզում այդ մասին խոսել, բայց երևի պիտի ասեմ՝ իշխանություն ունեցողները մի տրամաբանություն ունեն՝ ենթակա է, ուրեմն ինչ-որ բանում մեղավոր է: Քանզի ենթարկեցնել կարելի է մեղավորին: Հրեշտակների ամբոխը նրան պետք չէ, պետք են մեղսագործներ, անբաններ, դավաճաններ, գանձագողեր: Դրանց հեշտ է կառա՛վարել: Առավել ևս՝ միշտ կարելի է պատճառի ու հետևանքի տեղերը փոխել: Իսկ մեղքը կգտնվի, եթե մեղավոր կա: Անցած երկու տարում մենք հաճախ ենք բախվել նման փաստերի:

Բոլորին ցնցեցին Վրաստանի ողբերգական դեպքերը: Բայց առաջին բեմականացումը, որտեղ մեղավորի դերը հատկացված էր ժողովրդին, մեր «Զվարթնոց» օդանավակայանում էր: Ցավոք, չստեղծվեց երևանյան օդանավակայանում «անկարգությունները» հետաքննող հանձնաժողով, բայց առանց դրա էլ ակնհայտ է միասնական սցենարը, որով զորքերը կամ ուշանում են, կամ չափազանց շտապում են օգնություն ցույց տալ: Իսկ կատարվածը նկարահանող պատանին զոհվեց: Վստահ եմ, որ չէին լինի ոչ թուրք-մեսխեթցիների խնդիրը, ոչ զանգվածային սպանությունները Բաք՛վում ու Սումգայիթում, եթե իշխանության տերերին անհրաժեշտ չլիներ ապացուցել իրենց անփոխարինելիությունը: Ահա տեսեք, ասում են նրանք, ինչ անարխիա կտիրի երկրում, եթե մեզ իշխանությունից հեռացնեք:

- Հիշում եք՝ մի քանի տարի առաջ Ձեզ բերեցին 1915 թվականի թուրքական կոտորածների ականատեսի գրառումները, որ Ձեզ ցնցել էին իրենց բնականությամբ: Երբևէ կարո՞ղ էիք պատկերացնել, որ նման բանի ականատես կդառնաք: Թեպետ դա բոլո՛րովին Ձեր թեման չէ, Դուք ունեք Ձեր աշխարհը, և հանկարծ... Իբրև գրող Դուք երբևէ կնկարագրե՞ք այն ամենը, ինչ մենք ապրել ենք այս ընթացքում:
- Սոցիալական աղետների ոլորտին ես անդրադարձել եմ իմ գրքերում, բայց, խոստովանում եմ, այդ արել եմ մեծագույն տհաճությամբ, որովհետև նեխվածության հոտը անընդհատ խփում էր քթիս ու ստիպում էր ցնցվել: Իմ հետագա կյանքը ես պատկերացնում էի ոչ թե իմ նախկին հերոսների կողքին, այլ շատ ավելի վաղ անցյալում: Ինչ վերաբերում է այսօրվա ցնցումների նկարագրությանը, թերևս կգտնվեն ինձնից երիտասարդ և ամուր նյարդերով գրողներ: Վերջերս հրատարակվեց Սամվել Շահմու՛րադյանի փաստագրական գիրքը սումգայիթյան ողբերգության մասին, և նա, փառք Աստծո, առաջվա պես պինդ է:
- Իսկ Դուք երբեք ցանկություն չե՞ք ունեցել զբաղվել զուտ հրապարակախոսությամբ: Չէ որ այնքան ուզում ես ճչալ, բոլոր զանգերը խփել, որ մարդիկ լսեն ճշմարտությունը:
- Ինձ համար արձակը բնական վիճակ է: Իմ վերջին վիպակում ես նկարագրել եմ կոնկրետ իրավիճակ, ինձ թվում էր, որ դա միայն թեթևակի շեղում է մի կողմի վրա, նահանջ է մի կողմ, ոչ մեծ էքսկուրս դեպի անցյալը, որից ես արագ կանցնեմ իմ թեմային: Բայց քանի որ նույնիսկ հպանցիկ չէի ցանկանում լինել մակերեսային, ոչ ճշգրիտ, մոտավոր՝ մանրամասներում, այդ էքսկուրսը հավելվեց մանրամասներով: Այդտեղ և՛ սպանություն կար (իրադարձությունները տեղի էին ունենում 1918 թվականի ամռանը, երիտթուրքերի արշավանքի ժամանակ, որոնց առաջնորդում էր Վեհիբ բեյը), և ես հանկարծ, ինքս էլ դա չցանկանալով, մարգարեացա՝ կանխագուշակելով այսօրվա աղետները: Վիպակի վրա աշխատելիս ես չէի ցանկանում խոսքով մերկացնել այն, ինչ աչքիս առաջ էր: Իսկ ես տեսնում էի վախկոտություն, դավաճանություն, մարդկային ամբողջ կեղտը, որ կարելի է պատկերացնել: Բայց հենց հասա սպանության նկարագրությանը, գրիչը վայր դրեցի, ես ֆիզիկապես չէի կարող դա գրել, ձեռքս բառացիորեն հրաժարվում էր գրիչ պահել: Խոսելով Ռուբլյովի մասին, այն մասին, որ ի սկզբանե ԲԱՆՆ էր, ես ինձ

էլ նկատի ունեի... Սումգայիթի իրադարձությունները ինձ կանխեցին: Հիմա ես նորից ցանկանում եմ շարունակել վիպակը, բայց այս անգամ, դժբախտաբար, ես իբրև «մունետիկ-պատմաբան» դժվա-րությամբ եմ հասնում ադրբեջանահայկական իրադարձությունների հետևից:

- Այս պահին ի՞նչ ելք եք տեսնում հանրապետության ու ժողովրդի համար:

- Այն, ինչ կասեմ, կարող է աբսուրդ թվալ, բայց ելքը հենց այս անելք վիճակի մեջ է, ուր հայտնվել ենք: Կյանքը շարունակվում է, ժողովուրդը ուշքի կգա, ոտքի կկանգնի, կզբաղվի իր գործերով: Բացասական շատ երևույթներ ջրի երես կելնեն՝ ամեն ինչ կլինի՝ առնել-ծախել, տարբեր մեքենայություններ: Գնացողը կգնա (վստահ եմ՝ արտագաղթը կտրուկ կաճի), մնացողը կմնա: Անհրաժեշտությունը կպարտադրի մաքրել ոչ միայն ավերվածը, այլև ամեն տեսակի աղբ: Մեր աչքի առաջ է ներկա քաղաքակիրթ աշխարհի բարեկեցիկ օրինակը, որ թույլ չի տա վերադառնալ անցյալ՝ ոչ դեպի Ստալին, ոչ դեպի Մաո: Ինչ էլ մենք ասենք, մեր կյանքը ձգտում է այդ փորձը փոխանակել, սկզբում իբրև սուռոգատ, որ մեզ նյարդայնացնում է իր խղճուկ ձևերով ու հնարավորություններով, իսկ հետո իբրև ինքնուրույն քաղաքակիրթ կյանք: Աստված մեզ առողջություն տա, որ կարողանանք այդ ամենին մասնակցել:

Զրույցը վարեց Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ
«Լիտերատուրնոյե օբոզրենիե»
N 10, 1990 թ.